Հայաստանի Հանրապետության

Արագածոտնի մարզի

ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 – 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կողմից:

Ներկայացվել է՝ համայքի ղեկավար Մուրադ Մանուկյանի կողմից:

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 20. 12. 2016 թ. № 22 որոշմամբ:

գ. Գետափ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկվարի ողջույնի խոսք _____ 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն_____5
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն_____5
   2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական նկարագրություն_____6
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր_____10
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ_____14
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ_____16
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն_____17
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում_____18
   3.1 Համայնքի զարգացման տեսլականը_____18
   3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները_____22
4. ՀՀԶԾ-ի ֆինանսավորում_____23

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

ՀՀ Արագածոտնի մարզի Գետափ գյուղական համայնքի 2017-21 թթ. հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում, ՀՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը, ինչպես նաև համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կողմից ներկայացված մոտեցումները:

ՀՀԶԾ-ն մշակելիս հաշվի են առնվել հետևյալ չափանիշները.

- ✓ Համայնքի բնակչության թվաքանակը
- ✓ Համայնքի ֆինանսական կարողությունները
- ✓ Համայնքում առկա ենթակառուցվածքները
- ✓ Մատուցվող ծառայությունները
- ✓ Համայնքի բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունները:
- ✓ Համայնքի ուժեղ և թույլ կողմերը, առկա ռիսկերը:

Չնայած այն հանգամանքին, որ համայնքն իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով դասվում է հանրապետության փոքր համայնքների շարքին, այնուամենայնիվ, համայնքի տեղական ինքնակավարման մարմինները համայնքի բնակչության գործուն աջակցությամբ և սեփական միջոցների արդյունավետ ներգրավմամբ լուծում են համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ՝ ապահովելով համայնքի զարգացման թեև դանդաղ, բայց հաստատուն առաջընթացը:

Այդ պատճառով սույն ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է նախևառաջ համայնքի սեփական ռեսուրսային (մարդկային ,նյութական, ֆինանսատնտեսական, տեխնիկական և գույքային) հնարավորություններով:

Համայնքի 2017-21 թթ. հնգամյա զարգացման ծրագրի մշակման հիմքում դրված է համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների պատրաստակամությունը՝ հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով, աստիճանաբար բարձրացնել բնակչության կենսամակարդակը, ապահովել համայնքի ընդգրկվածությունը և պատշաճ դերը տարածաշրջանի համայնքների զարգացման գործընթացներում:

ՀՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի զարգացման ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որ այն հնարավորինս համահունչ լինի ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային մասշտաբի գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին, ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ

լիակատար փոխըմբռնում և արդյունավետ համագործակցություն ՀՀԶԾ-ի մեջ ներկայացված խնդիրների լուծման հարցում:

ՀՀԶԾ-ի 4 հիմնական բաժինները:

ՀՀԶԾ-ի 2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի իրավիճակի նկարագրությունը:

ՀՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում է նպատակների ահմանումը և գործողությունների պլանավորումը:

ՀՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է ծրագրերի ֆինանսավորումը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1.1 *Պատմական համառոտ ակնարկ և աշխարհագրական դիրքը*

Գետափ համայնքը հիմնադրվել է 1918 թվականին:

Գյուղի բնակիչները գաղթել են Մուշից, Ախլաթից, Ալաշկերտից, Կարսի մարզի Տիգոր, Լալոյի Մավրակ, Ալամ և Ծբնի գյուղերից, բնակություն հաստատել լքված բնակավայրում և շենացրել այն:

Գետափ գյուղը գտնվում է Երևան-Այրում երկաթուղու 100-րդ կմ-ի, Արմավիր-Գյումրի ավտոմայրուղու 50-րդ կմ-ի վրա, մարզկենտրոն Աշտարակ քաղաքից 70 կմ դեպի արևմուտք, ծովի մակերևույթից 1315 մ բարձրության վրա, Ախուրյան գետի ձախ ափին:

Գետափ համայնքի վարչական տարածքը կազմում է 2037.8 հա, սահմանակից է Թլիկ, Հակո, Արագածավան համայնքներին, արևմուտքից՝ Թուրքիային:

Համայնքը ընդգրկած է ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկում:

2.1.2 *Ժողովրդագրություն*

Համայնքի բնակչության թիվը առ 01. 07. 2016 թ. կազմում է 207 մարդ, այդ թվում՝ տղամարդիկ-90, կանայք-117:

Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է.

0-6 տարեկաններ – 17 մարդ

7-17 տարեկաններ – 40 մարդ

18-63 տարեկաններ – 138 մարդ

64 և ավելի տարեկաններ – 12 մարդ

Կենսաթոշակառուների թիվը – 18 մարդ, այդ թվում.

Տարիքային և աշխատանքային թոշակառուներ – 14

Մանկուց հաշմանդամ թոշակառուներ – 2

Հաշմանդամներ – 2

Աշխատունակներ – 133 մարդ
Զբաղվածներ – 123 մարդ
Տնային տնտեսությունների թիվը – 77
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներ – 2

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ:

№	Իրավիճակի նկարագիրը	Փաստացի 2016 թվականին	Ճշտվող 2017 թ.
1	Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն (2016 թ. եկամուտներ)	7355.86 հազ. դրամ	7516.7
2	Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը	38%	39.5%
3	Ծառայությունների ոլորտի հիմնական ձեռնարկություններ	___	___
4	Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ծավալները և սպառման շուկաները, այդ թվում՝ աշնանացան ցորեն_____ գարնանացան գարի_____ միս_____ միրգ (հիմնականում ծիրան)__	Շուկա և մթերող կազմակերպու-թյուններ 20.000 կգ 100.000 կգ 7.000 կգ 50.000 կգ	Նույնը 50.000 կգ 590.000 կգ 10.000 կգ 85.000 կգ
5	Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձան	7-րդ դարի բազմա-խորան եկեղեցի	Նույնը
6	Նախադպրոցական հաստատություն	___	___
7	Դպրոցական հաստատություն	Հիմնական դպրոց. Տիպային շենք 195 աշակերտի համար	Նույնը
8	Առողջապահական հաստատություն	Բուժկետ. 1 աշխատող	Նույնը
9	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիք	2 ընտանիք	Նույնը

Աղյուսակ 2. Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն

№	Եկամուտների անվանումը	2016 թ.		2017 թ.	
		Պլան	Կատ.	Նախագ.	Փոփոխ.
	Բյուջետային մուտքեր, ընդամենը՝ (I+II+III)	7678.1	8003.86	6377.4	8430.4
I	Ընդամենը եկամուտներ (1+2+3)	7030.1	7355.86	5986.4	7526.7
1	Հարկեր և տուրքեր Այդ թվում՝ գույքահարկ շ./շին. _____ Հողի հարկ_____ փ/մ-ի գույքահարկ_____ տեղական տուրքեր_____	2005.0 6.0 1757.0 240.0 2.0	2009.36 6.0 1757.1 242.26 4.0	2003.0 6.0 1757.0 240.0 __	2170.0 11.0 1900.0 254.0 5.0
2	Պաշտոնական դրամաշնորհներ Այդ թվում՝ - դոտացիա_____ - այլ դոտացիա_____	4541.7 3500.0 1041.7	4541.7 3500.0 1041.7	3500 3500.0 __	4541.7 3500.0 1041.7
3	Այլ եկամուտներ Այդ թվում՝ հողի վարձավճար_____ Այլ գույքի վարձավճար_____	483.4 323.4 160.0	804.8 324.8 480.0	483.4 323.4 160.0	815.0 335.0 480.0
II	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր Այդ թվում՝ շարժ. գույքի իրացումից_____ Հողի իրացումից_____	401.0 __ 401.0	401.0 __ 401.0	__ __ __	500.0 __ 500.0
III	Բյուջեի հավելուրդը կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները Այդ թվում՝ վարչ. բյուջեի մնացորդը_____ Ֆոնդ. բյուջեի մնացորդը _____	247.0 76.7 170.3	247.0 76.7 170.3	391.0 25.0 366.0	403.7 37.7 366.0

❖ Ինչպես ցույց է տալիս (աղուսակ 1, 2) բյուջեի եկամուտների 2016-17 թթ. ցուցանիշների վերլուծությունը՝ համայնքի սեփական եկամուտները միջին հաշվով կազմում են ընդհանուր եկամուտների 38%-ը:

Ընդհանուր եկամուտների մեջ սեփական եկամուտների տեսակարար կշիռը բարձրացնելուն ուղղված միջոցառումները կնախանշվեն համայնքի ֆինանսական իարվիճակի նկարագրության բաժնում:

❖ Համայնքում ծառայությունների ոլորտի ձեռնարկություններ չկան:

Առևտրի, կենցաղսպասարկման, մեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններից օգտվելու համար համայնքի բնակիչները գնում են այլ մոտակա բնակավայրեր:

Ներկայումս ավտոճանապարհների բարեկարգ վիճակը սեփական տրանսպորտային միջոցների և հասարակական տրանսպորտի առկայությունը համայնքի բնակիչներին թույլ է տալիս ազատ տեղաշարժվել և օգտվել ավելի լավ կազմակերպված քաղաքային սպասարկման կետերից:

❖ Գյուղատնտեսությունը համայնքի բնակչության զբաղմունքի հիմնական ոլորտն է: Համայնքի բոլոր տնտեսություններն առանց բացառության զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Համայնքի վարչական տարածքի 2037.8 հա-ից գյուղ. նշանակության հողերը կազմում են 1766.8 հա, որից՝ 525.0 հա-ը վարելահողեր են, մնացածը՝ արոտավայրեր:

525.0 հա վարելահողերից ոռոգելի են 100.0 հա-ը, բայց ոռոգման ջրի սակավության և ջրագծերի մաշվածության պատճառով փաստացի ոռոգվում է 40÷45 հա-ը:

Ոռոգման ջուրը համայնքին մատակարարվում է Ախուրյան գետի ափին տեղակայված պոմպակայանից:

Բարենպաստ գյուղատնտեսական տարում, ջրովի և անջրդի հողերի ընդհանուր միջին բերքատվությունը կազմում է 23-ից 25 ց հա-ից:

Սակայն 2016 թ. վաղ գարնան երաշտի և հետո տեղի ունեցած կարկտահարությունների պատճառով, համայնքի 330 հա ցանքատարածությունների բերքատվությունը կազմեց 3.7 ց/հա, փչացավ այգիների ամբողջ միրգը:

Անասնապահության արդյունավետությունը, գլխաքանակի աճը կամ նվազումը համայնքում, ամբողջովին կախված է հողերի բերքտվությունից և միջին համախառն արդյունքից:

Հիմնականում գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրներ չեն առաջանում:

❖ Համայնքի տարածքում կա 7-րդ դարով թվագրվող բազմախորան եկեղեցի, որի շուրջը կան բնակավայրի փլատակներ:

Այն զբոսաշրջության համար գրավիչ դարձնելու, նպատակով, համայնքում միջոցներ ենք փնտրում, որպեսզի հնարավորինս բարեկարգվի և մաքրվի եկեղեցին և շրջակա տարածքը:

❖ Համայնքում նախադպրոցական հաստատություն չկա, քանի որ երեխաների թիվը քիչ է:

Գործում է հիմնական դպրոց, որի 9 դասարաններում սովորում է 18 աշակերտ:
Դպրոցի 195 աշակերտատեղով տիպային շենքը կառուցվել է 1990 թվականին: Այն գտնվում է բարվոք վիճակում, ունի հիմնանորոգված սպորտային դահլիճ:

❖ Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1987-90 թթ.: Շենքի տանիքը ժամանակին կառուցվել է շիարարական նորմատիվների կոպիտ խախտումներով և այժմ գտնվում է անմխիթար վիճակում:

Նույն շենքում են տեղակայված համայնքի գրադարանը և բուժկետը:
Բուժկետն ունի 2 վերանորոգված սենյակ, կահավորված է անհրաժեշտ պարագաներով, սպասարկումն իրականացնում է 1 բուժքույր:

Մշակույթի տան բակում գործում է վոլեյբոլի դաշտ, խաղասենյակում կա բիլիարդի և թենիսի խաղադաշտեր:

❖ Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ Կառավարության 14. 03. 1997 թ. թիվ 51 որոշմամբ: Ներկայումս համայնքի սեփականություն համարվող գույքն ունի հետևյալ ցանկը և առկա վիճակը.

Աղյուսակ 3. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում:

№	Անվանում	Հասցե	Կառուց-ման տարի	Քանակ	Վիճակի ընդհանուր գնահատա-կան	Նախատեսվող աշխատանքների հակիրճ նկարագիր
1	2	3	4	5	6	7
1	Մշակույթի տուն (բուժկետ և գրադարան)	գ. Գետափ, փ. 1, փկղ. 3, շենք 2	1990 թ.	1280 մ^2	Անբավարար	Անհարժեշտ է փոխել 1300 մ^2 ամբողջ տանիքը
2	Համայնքապետարանի վարչական շենք	փ. 1, շենք 1	1947 թ.	200 մ^2	Բավարար	Տանիքի նորոգում և շենքի ներքին հարդարում
3	Խմելաջրի ներքին համակարգ	գ. Գետափ	1969 թ.	1865 գմ.	Բավարար	Խողովակաշարի վերակառուցում, դիտահորերի և ջրաչափերի տեղադրում
4	Ոռոգման ցանց	գ. Գետափ	1973 թ.	5500 գմ.	Անբավարար	1500 գմ. հատվածի հիմնանորոգում
5	Հասարակական գերեզմանատներ (հայկական, եզդիական)	գ. Գետափ	1920 թ.	2	Բավարար	Տարածքների ցանկապատում 450 գմ և 250 գմ
6	Գյուղամիջյան ճանապարհներ և փողոցներ	գ. Գետափ	1920 թ.	2000 գմ	Բավարար	Ավազեծածկույթի վերանորոգում և գիշերային լուսավորության կառուցում՝ 10 կետ
7	Գյուղատնտեսական մեքենաներ	գ. Գետափ	1985թ.	8 միավոր	Բավարար	Խոտանման ենթակա՝ 3 միավոր, հիմնանորոգման ենթակա 2 միավոր
8	Նախկին ուղեկալի տարածք	գ. Գետափ	1952 թ.	0.7 հա	Անբավարար	Ցանկապատի և շենքերի հիմնական նորոգում

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

2.3.1 Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք 5 տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերը և միջոցառումները

Հանրապետական և մարզային ծրագրերի իրականացման շրջանակում նախատեսվում է Գետափ համայնքում լուծում տալ հետևյալ հիմնախնդիրներին.

❖ Անհրաժեշտ է շարունակել պետության կողմից արտոնյալ գներով պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուների և դիզելային վառելանյութի տրամադրումը գյուղացիներին:

Պետության կողմից սուբսիդավորվող գյուղատնտեսական վարկերը պետք է տրամադրվեն ավելի երկար ժամանակով և ավելի ցածր տոկոսադրույքով:

❖ Համայնքում բոլոր նախադրյալները կան պետության կողմից իրականացվող համայնքային գյուղատնտեսական կոոպերատիվների հիմնադրման ծրագրում ընդգրկվելու համար, ինչի շնորհիվ համայնքը հնարավորություն կունենա նորացնել համայնքում առկա գյուղ. մեքենաների պարկը, արոտավայրերի ջրարբիացման միջոցով բարձրացնել արոտավայրերի օգտագործման արդյունավետությունը:

❖ Համայնքի արոտավայրերից մոտ 80 հա լավագույն խոտածածկույթ ունեցող տարածք գտնվում է հայ-թուրքական պետական սահմանի հատվածում՝ Ախուրյան գետի ձորում: Այդ տարածքներն արդեն երկար տարիներ համայնքը չի կարողանում օգտագործել սահմանային ռեժիմի հարուցած արհեստական խոչընդոտների պատճառով: Այս հիմնախնդրի լուծման համար պետության կողմից պահանջվում է ոչ թե դրամական ներդրումներ այլ խնդրի հանգամանալից ուսումնասիրություն և լուծում տալու կամք:

Ախուրյան գետի երկայնքով գյուղատնտեսական կենդանիների ջրման հարցի լուծումը թույլ կտա օգտագործել ափամերձ արոտները և ավելի արդյունավետ օգտագործել հարակից 300 հա արոտավայրերը:

❖ Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1987-1990 թթ.: Շենքի կառուցման ավարտական ակտը չի կազմվել, քանի որ տանիքը (1300 մ^2) և դահլիճը կառուցվել են շինարարական նորմերի բազմաթիվ խախտումներով: Հետագայում, շենքը որպես անավարտ կառույց, հանձնվել է համայնքի հաշվեկշռին: Մշակույթի տան շենքը հնարավոր է ենթարկել փուլային վերանորոգման.

1. Տանիքի հիմնանորոգում
2. Շենքի ներքին սրահների վերանորոգում
3. Շենքի բակի ցանկապատում և բարեկարգում

Տանիքի վերանորոգումն առաջնային խնդիր է և այն թույլ կտա օգտագործել շենքի ամբողջ ներքին տարածքը և ավելի քան 1000 մ^2 նկուղային հարկը, որը քաղաքաշտպանական նշանակություն ունի:

Շենքում կա 120 նստատեղով դահլիճ մշակութային միջոցառումների համար, խաղասենյակ, գրադարան և տեղակայված է բուժկետը:

Շենքն ունի ևս 1 սրահ, որը վերանորոգելու դեպքում կարող է ծառայել որպես տարբեր հանդիսությունների և արարողությունների դահլիճ, ինչը ևս շատ կարևոր է համայնքի համար:

❖ Համայնքի գազաֆիկացման հիմնախնդիրը համայնքային ծրագրերի առաջնահերթությունների որոշման (աղյուսակ 4) ցանկում առաջնահերթ տեղ չի զբաղեցնում, քանի որ համայնքի բնակչությունն առայժմ առաջնահերթությունը տալիս է գյուղատնտեսական արտադրությունը խթանող ծրագրերին: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր տարածաշրջանում չգազաֆիկացված են մնում միայն Գետափ և Թլիկ սահմանամերձ համայնքները, ապա միջոցների առկայության դեպքում հնարավոր է իրականացնել երկու համայնքների գազաֆիկացումը 1 ծրագրով:

❖ Գետափ և Թլիկ համայնքներին խմելաջրի կենտրոնացված մատակարարում իրականացնելու համար կառուցվել է ՕԿՋ և 8 կմ երկարության ջրագիծ, որով սակայն մինչև

օրս ջուր չի մատակարարվում: Անհրաժեշտ է խնդրի ուսումնասիրություն և համակարգի գործարկում:

Մեկ այլ տարբերակով՝ պետք է վերակառուցվի «Չլկան» համակարգի 10 կմ-ոց ջրագիծը:

❖ Վերջին տարիներին համայնքի գյուղատնտեսության արտադրությունը մեծ վնասներ է կրում երաշտից և կարկտահարությունից:

Անհրաժեշտ է կազմակերպել աղետների ռիսկերի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, կանխարգելիչ միջոցառումների, մասնավորապես հակակարկտային կայանների տեղակայում:

2.3.2 Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրերը և միջոցառումները

❖ Այս համատեքստում, համայնքը համագործակցում է «Վերջին օրերի սրբերի» բարեգործություններ հայաստանյան գրասենյակի հետ, որի ֆինանսավորմամբ 2015 թ. իրականացվել է «ՕԿՋ-30տ» ծրագիրը, 2016 թ. աշնանն իրականացվել է Գետափի ոռոգման պոմպակայանի վերակառուցման ծրագիրը, որի միջոցներով տեղակայված նոր պոմպակայանը կգործարկվի 2017 թ. գարնանը:

❖ Համայնքը համագործակցում է «Կամրջակ» ՍԲՀԿ երևանյան գրասենյակի հետ, և նախատեսվում է 2017 թ. իրականցնել ոռոգման ջրագծերի 1500 գմ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ:

❖ Համայնքը համագործակցում է «Շեն» բարեգործական կազմակերպության հետ և նախատեսվում է 2017-19 թթ. ընթացքում, փուլային տարբերակով իրականացնել խմելաջրի ներքին ցանցի առանձին հատվածների վերակառուցման, դիտահորերի կառուցման, ջրաչափերի, խմելաջրի մանրեազերծման և ֆիլտրացման համակարգերի տեղադրման աշխատանքներ:

Աղյուսակ 4. Համայնքային ծրագրերի առաջնահերթությունների որոշումը:

№	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հ. դ.)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)					Ծրագրի առաջնահերթության համարակալում
			Հանրության աջակցությունը	Ազդեցությունն առողջության վրա/հասարակական միջավայրի վրա	Համայնքի կարողությունների հզորացում	Բնակչության սոցիալական պայմանների բարելավում	Ընդամենը (բալ)	
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ոռոգման ջրի պոմպակայանի գործարկում	7000.0	9	5	10	7	31	1
2	Մշակույթի տան տանիքի վերանորոգում	17000.0	5	5	7	7	24	6
3	Մշակույթի տան	3000.0	3	3	5	7	18	11

	տարածքի բարեկարգում և հանգստի գոտու կառուցում							
4	Համայնքի վարչական շենքի վերանորոգում	3500.0	5	5	4	5	19	10
5	Ոռոգման ցանցի 1500 գմ հատվածի վերակառուցում	25000.0	9	5	9	7	30	2
6	Ներհամայնքային փողոց-ների գիշերային լուսավո-րության անցկացում	2000.0	5	4	5	7	21	7
7.	Համայնքի գազաֆիկացում	37000.0	3	5	4	7	19	9
8	Խմելաջրի ներքին ցանցի վերակառուցում, ջրաչա-փերի տեղադրում	10000.0	8	5	7	5	25	5
9	Գյուղատնտեսական կոո-պերատիվի հիմնադրում	50000.0 3000.0	7	5	10	5	27	3
10	Հասարակական գերեզ-մանատների տարածքների ցանկապատում	3000.0	10	3	3	3	19	8
11	Հակակարկտային կայան-ների տեղակայում	5000	7	5	10	5	27	4

2.3.3 Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող ծրագրեր, միջոցառումներ, ներդրումներ:

Համայնքի տարածքում մասնավոր ընկերությունների կողմից իրականացվող ծրագրեր և ներդրումներ դեռևս չկան և չեն նախատեսվում:

Սահմանամերձ և կենտրոնից հեռու գտնվող համայնքներին պետք է տրամադրել կենտրոնից շահեկանորեն տարբերվող հարկային արտոնություններ, որը կարող է աշխուժացնել գործարար միջավայրը:

Հաշվի առնելով համայնքի բնակլիմայական պայմանները և բնական ռեսուրսների առկայությունը՝ համայնքում կարելի է զարգացնել այգեգործությունը, հիմնել մրգի առաջնային վերամշակման արտադրամասեր, ջերմոցային տնտեսություններ:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Վերլուծելով համայնքի 2016-17 թթ. բյուջեների ցուցանիշները (աղյուսակ 5) կարելի է նկատել, որ եկամտային մասում ապահովված է 100%-անոց կատարողական, ընդ որում, 2017 թ. բյուջեում նախատեսված է միայն սեփական եկամուտների հաշվին ընդհանուր եկամուտների 5.5 %-ի աճ (8430.4 հ. դ. – 8003,68 = 426.7 հ. դ.), իսկ պետական բյուջեից տրվող պաշտոնական դրամաշնորհները 2017 թ. մնում են նույնը:

Հաջորդ տարիների համար նախատեսվում է ընդհանուր եկամուտների ամենամյա աճ, որը 5.5 %-ից կհասնի մինչև 12.7 %: Միևնույն ժամանակ սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ աճում է 38 %-ից մինչև 50.5 %:

2017 - 21 թթ. բյուջեների եկամուտների պլանավորման և կանխատեսման ցուցանիշները ցույց են տալիս, որ համայնքի սեփական եկամուտների ամենամյա կանոնավոր աճի հետ ակնկալվում են նաև պաշտոնական դրամաշնորհների համամասնական աճ:

Սեփական եկամուտների պրոգրեսիվ աճը նախատեսվում է ապահովել հետևյալ միջոցների հաշվին.

❖ ըստ կանխատեսումների և ձեռնարկվող գործուն միջոցառումների արդյունքում գյուղատնտեսության ոլորտում կատարվող բարեփոխումների շնորհիվ համայնքում հիմնված և նոր հիմնվող ավելի քան 50 հա այգեգործական տարածքների հողերը ցածրարժեքից բարձրարժեք հողատեսքերի խումբ տեղափոխելով բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ կունենանք սեփական եկամուտների տարեկան մինչև 8 %-ի աճ:

❖ արոտավայրերի արդյունավետ օգտագործման պայմաններ (ջրարբիացում կամ ջրման այլ պայմանների ապահովում) ստեղծելու դեպքում հնարավոր կլինի հողերի վարձավճարների հաշվին ապահովել սեփական եկամուտների ևս 5 %-ի տարեկան աճ:

❖ Հողի հարկի կուտակված ապառքներից գանձումներ կատարելով ապահովել սեփական եկամուտների ևս 5 %-ի աճ:

Համեմատաբար ավելի սուղ են ֆոնդային բյուջեի եկամուտները, բայց միաժամանակ հասունացել են խնդիրներ, որոնց լուծումը առաջիկա 5 տարիների համար ուղղակի անհրաժեշտություն է (տես աղյուսակ 4):

Լրացուցիչ ֆոնդային եկամուտներ ապահովելու համար նախատեսվում է օտարել մոտավորապես 40 հա համայնքային սեփականույթյան գյուղ. նշանակության հողեր և համայնքային սեփականության գյուղատնտեսական մեքենաներից 2÷3 միավոր և օտարումից ստացված գումարներն ուղղել ծրագրերի համաֆինանսավորմանը, մնացած գյուղատնտեսական մեքենաների հիմնական նորոգման կամ էլ մեկ այլ գյուղմեքենա ձեռք բերելու ծախսերին:

Աղյուսակ 5. *Համայնքային բյուջեի եկամուտների 2016 թ. ելակետային տարվա փաստացի և 2017-21 թթ. համար կանխատեսվող ցուցանիշներ:*

№	Եկամուտների անվանում	2016		2017		Կանխատեսվող ցուցանիշներ			
		Պլան	կատա- րողա- կան	Բյուջեի նախագ.	Ճշտվող բյուջե	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	Բյուջետային մուտքեր. ընդամենը – (I+II+III)	7678.1 8048.1	8003.86	6377.4	8430.4	9301.0	10453.0	11731.0	13224.0
I	Ընդամենը – եկամուտներ (1+2+3)	7030.1 7352.1	7355.86	5986.4	7526.7	8101.0	8753.0	9431.0	10124.0
1	Հարկեր և տուրքեր – ընդամենը այդ թվում՝ գ. հարկ –	2005.0 6.0 1757.0	2009.36 6.0 1757.1	2003.0 6.0 1757.0	2170.0 11.0 1900.0	2271.0 11.0 2000.0	2373.0 11.0 2100.0	2501.0 14.0 2220.0	2644.0 15.0 2350.0

	շենք/շին. - հողի հարկ - գ. հարկ. – փ/միջ. - տեղական տուրքեր	240.0 4.0	242.26 4.0	240.0 _	254.0 5.0	255.0 5	255.0 7	260.0 7	270.0 9
2	Պաշտոնական դրամաշնորհներ – ընդամենը այդ թվում – դոտացիա - այլ դոտացիա	4541.7 3500.0 1041.7	4541.7 3500.0 1041.7	3500.0 3500.0 _	4541.7 3500.0 1041.7	5000.0 3500.0 1500.0	5500.0 3500.0 2000.0	6000.0 3500.0 2500.0	6500.0 3500.0 3000.0
3	Այլ եկամուտեր – ընդամենը այդ թվում – հողի վարձավճար - այլ գույքի վարձավճար	483.4 323.4 480.0	804.8 323.4 480.0	483.4 323.4 160.0	815.0 335.0 480.0	830.0 350.0 480.0	880.0 400.0 480.0	930.0 450.0 480.0	980.0 500.0 480.0
II	Հիմնական միջոցների իրա-ցումից մուտքեր – ընդամենը այդ թվում – շարժական գույքի իրացումից մուտքեր - հողի օտարումից	401.0 _ 401.0	401.0 _ 401.0	_ _ _	500.0 _ 500.0	800.0 300.0 500.0	1200.0 500.0 700.0	1800.0 500.0 1300.0	2300.0 - 2300.0
III	Բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները - ընդամենը այդ թվում – վարչական բյուջեի մնացորդը - ֆոնդային բյուջեի մնացորդը	247.0 76.7 170.3	247.0 76.7 170.3	391.0 25.0 366.0	403.7 37.7 366.0	400.0 50.0 350.0	500.0 80.0 420.0	500.0 70.0 430.0	800.0 50.0 750.0
IV	Համեմատական ցուցանիշներ 1. Ընդհանուր եկամուտների աճը նախորդ բյուջետային տարվա եկամուտների համեմատ - % 2. սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ - %		5.5 38.0		5.5 45.0	10.0 46.0	12.0 47.0	12.0 48.8	12.7 50.5
	Ծախսային մաս								
№	**Ծախսերի անվանումը**								
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**
	Ընդամենը բյուջետային ծախսեր (I+II)	8048.1	7649.0	6377.4	8430.4	9301.0	10453.0	11731.0	13224.0
I	Վարչական ծախսեր (1+2+3+4+5+6+7+8)	7352.1	7355.86	5986.4	7526.7	8101.0	8753.0	9431.0	10124.0
1	Կառավարման ապարատ (01-1-1)	5885.1	5858.1	4651.0	5857.7	6150.0	6300.0	6500.0	7000.0
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (01-6-1)	15.0	15.0	15.0	15.0	15.0	15.0	15.0	15.0
3	Քաղաքացիական պաշտպանություն (02-2-1)	_	_	_	_	82.0	164.0	176.0	189.0
4	Գյուղատնտեսություն (04-2-1)	_	_			50.0	50.0	50.0	50.0
5	Ջրամատակարարում (06-3-1)	358.0	358.0	80.0	230.0	300.0	350.0	450.0	450.0
6	Մշակույթ (08-2-3)	894.0	887.9	894.0	894.0	894.0	894.0	980.0	980.0
7	Այլ մշակութային կազմակեր-	200.0	200.0	46.4	150.0	200.0	200.0	260.0	270.0

	պություններ (08-2-4)								
8	Պահուստային ֆոնդ (11-1-2)	_	_	300.0	380.0	410.0	780.0	1000.0	1170.0
II	Ֆոնդային բյուջեի ծախսեր. ընդամենը (1+2+3)	696.0	330.0	391.0	903.7	1200.0	1700.0	2300.0	3100.0
1	այդ թվում՝ - վարչական սարքեր	346.0	_	111.0	153.7	200.0	200.0	200.0	200.0
2	-ջրամատակարարման սարքավորումներ	350.0	330.0	280.0	250.0	300.0	350.0	350.0	500.0
3	-համայնքի զարգացման բազմա-նպատակ ծրագրերի ֆինան-սավորում	_	_	_	500.0	700.0	1150.0	1750.0	2400.0

2.5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը և ապրուստի միջոցը գյուղատնտեսությունն է, և եթե համայնքի զարգացումը դիտարկում ենք որպես միայն համայնքի սեփական ընդհանուր ռեսուրսից կախված գործընթաց, ապա միանշանակ է, որ համայնքի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնը գյուղ. արտադրության մեջ արձանագրված վերջին մի քանի տարիների ձախողումներն են՝ բնական աղետների պատճառով:

Մասնավորապես վերջին 5 տարիների ընթացքում՝ 2012-2014-2016 թթ. համայնքում գրանցվել է երաշտ և կարկտահարություններ, ինչի պատճառով արդյունքը եղել է զրոյական, իսկ պետության կողմից աջակցությունը բազմապատիկ անհամաչափ: Այս 5 տարիների ընթացքում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը նվազել է 25%-ով, իսկ մանր եղջերավոր կենդանիներինը՝ 48%-ով:

Հիմնականում այս իրավիճակն է, որ արգելակում է գյուղատնտեսության զարգացումը, ինչն էլ ուղղակիորեն բացասական է անդրադառնում բնակչության կենսամակարդակի վրա:

Գյուղատնտեսական արտադրությունը խթանելու համար անհրաժեշտ է աշխատանքներ տանել երեք ուղղություններով.

1. Նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդնում գյուղատնտեսական արտադրության մեջ:
2. Բնական երաշտի գործոնը նվազեցնելու համար ոռոգման համակարգի կառուցում և ոռոգելի հողատարածքների ընդարձակում
3. Մթնոլորտային վնասաբեր երևույթների՝ մասնաորապես կարկտահարության դեմ պայքարի միջոցառումների իրականացում:

Համայնքի զարգացման առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում են իրականացնել այդ ուղղություններից բխող ծրագրեր

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈ-ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.6.1 *Համայնքի ուժեղ կողմերը*

- Համայնքի աշխարհագրական դիրքը համայնքով (բնակավայրին կից) անցնող Երևան-Այրում երկաթուղին և Արմավիր-Գյումրի ավտոմայրուղին
- Համայնքի վարչական տարածքով (բնակավայրին կից) հոսող Ախուրյան գետի առկայությունը, որը ոռոգման և կենցաղային ջուր ունենալու մշտական աղբյուր է
- Համայնքում հիմնական դպրոցի և դպրոցական տիպային շենքի առկայությունը
- Համայնքում որակյալ հեռախոսակապի և թվայնացած հեռուստահաաղորդումների առկայությունն է
- Խմելու և ոռոգման ջրի որոշակի քանակության առկայությունը
- բավարար քանակի գյուղատնտեսական (արոտվայրեր և վարելահողեր) հողերի առկայությունը
- համայնքի բնակչության համախմբվածությունը և կամքը սեփական խնդիրները լուծելու հարցում

2.6.2 Համայնքի թույլ կողմերը

- Ոռոգելի հողերի ոռոգման ջրով ապահովվածության ցածր մակարդակը ոռոգման ջրի փոքր քանակության և ջրագծերի անմխիթար վիճակի պատճառով
- բնական աղետների պատճառով գյուղատնտեսության կրած վնասները և դրանց դեմ պայքարի միջոցառումների բացակայությունը
- Խմելաջրի ներքին ցանցիի մաշվածության պատճառով ջրի կորուստների առկայությունը
- համայնքի գազամատակարարման բացակայությունը
- Մշակույթի տան շենքի տանիքի անմխիթար վիճակը

2.6.3 Համայնքի զարգացման հնարավորությունները

- Ոռոգման համակարգի բարելավումը (պոմպակայանի և ջրագծերի վերակառուցումը թույլ կտա զարգացնել այգեգործությունը և ընդլայնել բազմամյա մշակաբույսերի ցանքատարածությունները)
- Պետական սահմանի հատվածում գտնվող արոտավայրերի արդյունավետ օգտագործման հարցի լուծումը կարող է դառնալ անասնապահության զարգացման հիմնական գործոն
- Համայնքի մշակույթի տան տանիքի ամբողջական նորոգումը թույլ կտա շենքը փրկել արտաքին ներգործություններից, ներքին տարածքները վերանորոգել և կահավորել որպես հասարակական կենցաղի և մշակութային միջոցառումների սրահներ նաև ապահովել բուժկետի, գրադարանի և խաղասրահների բնականոն աշխատանքի պայմանները
- Համայնքի գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը

2.6.4 Սպառնալիքներ

❖ Խմելու ջրի մատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով ջրի կորուստների աճը, ջրի արդյունավետ կառավարման անհնարինությունը և սանիտարահիգիենիկ պայմանների վատթարացման վտանգի առկայությունը

❖ Համայնքի երիտասարդության շրջանում առկա և աճող անվստահությունը գյուղի հետ իրենց ապագան կապելու, ընտանիք կազմելու և գյուղում հիմնավորվելու առնչությամբ, ինչն էլ իր հերթին ազդում է համայնքի կենսագործունեության վրա, կասեցնում ազգաբնակչության բնական աճը և զարգացումը

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Համայնքի զարգացման հեռահար նպատակն (տեսլականը) է համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների կայուն զարգացող արտադրություն, բարեկարգ և մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող նաև զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր: Այդ նպատակին հասնելու ռազմավարությունն է.

❖ Գյուղատնտեսական հողերի մշակման արդյունավետության բարձրացումը, պտղատու այգիների և բազմամյա խոտաբույսերի տարածքների ընդլայնումը գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնման միջոցով

❖ Անասնապահության զարգացումը և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճը անասնագլխաքանակի աճի, մայրական հոտի բարելավման և խնամքի արդյունավետության բարձրացման միջոցով

❖ Ընտանեկան գործարար միջավայրի խթանումը տնային պայմաններում չոր մրգերի արտադրության կազմակերպման միջոցով

❖ համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանումը, նորոգումը, շահագործումը և զարգացումը

❖ ներահամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգումը, գիշերային լուսավորության համակարգի կառուցումը

❖ Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում, գազամատակարարում, աղբահանություն և սան. մաքրում, տրանսպորտի և կապի, դպրոցական հանրակրթության, մշակույթի և սպորտի, սոցիալական պաշտպանության և այլն) շրջանակի ընդլայնման և որակի բարձրացման միջոցով

❖ տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցության բարելավումը և ակտիվացումը

❖ Համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծումը գիշերակացի տնային պայմանների ապահովման և դեպի ահմանային գոտում գտնվող եկեղեցի այցելելու պայմանների ապահովման միջոցով

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները բերված են գծապատկեր 1-ում

Գծապատկեր – 1, համայնքի կայուն զարգացման ցուցնիշները

1. Աղքատ ընտանիքների թվի հարաբերությունը ընտանիքների ընդհանուր թվին
2. Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը
3. Բնակչության թվի աճը
4. (0-15) տարեկան բնակչության թվի հարաբերությունը բնակչության ընդհանուր թվին
5. (16-50) տարեկան բնակչության թվի հարաբերությունը բնակչության ընդհանուր թվին



3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները: **Գծապատկեր 2**



4. ՀՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, առկա հիմնախնդիրների սահմանումից, համայնքի զարգացման ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա 5 տարիների համար սահմանված հիմնական նպատակներից՝ ՀՀԶԾ-ի կառավարման խորհրդակցական մարմնի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 6), որոնք ընդգրկվում են համայնքի հնգամյա զարգացման (2017-2021 թթ.) ծրագրում:

Աղյուսակ 6, 2017-2021 թթ.ՀՀԶԾ-ում ընդգրկվող ծրագրերի ցանկը:

№	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (դրամ)
1	Ոռոգման պոմպակայանի վերկառուցում, վերագործարկում	7000.0
2	Մշակույթի տան շենքի հիմնանորոգում	19000.0
3	Ոռոգման ջրագծերի հիմնանորոգում	25000.0
4	Գյուղատնտեսական կոոպերատիվի հիմնում	32000.0
5	Խմելաջրի ներքին ցանցի հիմնանորոգում	9500.0
6	Հակակարկտային կայանքի տեղակայում	3500.0
7	Համայնքի վարչական շենքի հիմնանորոգում	3000.0
8	Համայնքի գազամատակարարում	35000.0
9	Փողոցների գիշերային լուսավորության համակարգի կառուցում	2000.0
10	Հասարակական գերեզմանատների ցանկապատում	2500.0

Ունենալով նախատեսվող ծրագրերի ցանկը, ստորև բերված աղյուսակ 7-ում ներկայացվում է ծրագրերի իրականացման տարեթվերը և ֆինանսավորման աղբյուրները:

Աղյուսակ 7.

№	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը հազ. դրամ	Ծրագրերի իրականացումն ըստ տարեթվերի					Ֆինանսավորման աղբյուրները		
			2017	2018	2019	2020	2021	Համայնքի միջոցներով	Դոնոր կազմակերպ.	Ղեկտական բյուջե
1	Ոռոգման պոմպակայանի վերանորոգում և վերագործարկում	7000.0	7000.0					2500.0	4500.0	_
2	Ոռոգման ջրագծերի հիմնանորոգում	25000.0	15.000	10000.0				3000.0	22000.0	_
3	Գյուղատնտեսական կոոպերացիային հիմնադրում	32000.0		19000.0	13000.0			2000.0	_	30000.0
4	Հակակարկտային կայանքի տեղակայում	3500.0		3500.0				500.0	_	3000.0
5	Խմելաջրի ներքին ցանցի հիմնանորոգում	9500.0		3500.0	3000.0	3000.0		900.0	8600.0	_
6	Մշակույթի տան շենքի	19000.0			8000.	5500.	5500.0	1000.0	8000.0	10000.

	հիմնանորոգում				0	0				0
7	Փողոցների գիշերային լուսավ. համակարգի կառուցում	2000.0		2000.0				200.0	_	1800.0
8	Հասարակական գերեզմանատների ցանկապատում	2500.0			2500.0			500.0	2000.0	_
9	Համայնքի գազամատակարարում	35000.0				15000.0	20.000.0	_	5000.0	30000.0
10	Համայնքի վարչական շենքի հիմնանորոգում	3000.0				3000.0	_	300.0	_	2700.0
Ընդամենը		138500.0	22000.0	38000.0	26500.0	26500.0	25500.0	10900.0	50100.0	77500.0